ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հաստատված է ամբիոնի նիստում

Պատմության
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ֆ.Վ.Մովսիսյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № 15

« 18 » մայիսի, 2023 թ.

Պ/Բ- 044 –ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍԸՆԹԱՑԻ

Դասիչ, դասընթացի անվանում

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

Մասնագիտություն՝ 011401.00.6 - Մասնագիտական մանկավարժություն / Պատմություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.18.6 – Պատմություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

Ամբիոն՝ պատմության
/ամբիոնի լրիվ անվանումը/

Ուսուցման ձևը՝ հեռակա
/առկա, հեռակա/

Կուրս/կիսամյակ

հեռակա 4-րդ կուրս, 2-րդ կիսամյակ

Դասախոս(ներ) ՝ Ղուլյան Յուրիկ
/անուն, ազգանուն/

էլ. հասցե Yura.ghulyan@mail.ru

Վանաձոր- 2023թ.

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

1. **Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում.**

§Մերձավոր Արևելքի երկրների պատմություն¦ դասընթացը կարևորվում է պատմության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է «Պատմություն» կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրները.**

Դասընթացի նպատակն է ուսանողներին ծանոթացնել Մերձավոր Արևելքի երկրների նոր և նորագույն շրջանի կարևորագույն իրադարձություններին:

1. Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքները պատմության վերաբերյալ:
2. Ուսանողներին սովորեցնել գիտելիքներն ու ունակությունները կիրառել պրակտիկ գործունեության մեջ:
3. Նախապատրաստել մանկավարժական հետագա գործունեության:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

§Մերձավոր Արևելքի երկրների պատմություն¦ դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների տեսական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների առկայությունը Միջին դարերի, Ասիայի և Աֆրիկայի երկրների պատմություն:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունքները**

§Մերձավոր Արևելքի երկրների պատմություն¦ դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. **Գիտելիք և իմացություն**

Ա1. Պատմագիտության բովանդակության, զարգացման փուլերի, պատմության իմաստի և նշանակության իմացություն, ազգային և համաշխարհային պատմագիտական հայեցակարգերի և պատմական գործընթացների հիմնարար և ժամանակակից հասկացությունների, տեսությունների ու մեթոդների իմացություն,

Ա2. Հայաստանի հարակից երկրների պատմության ընթացքի, փուլերի, կարևորագույն իրադարձությունների, պատմական մտքի, պատմական առանձին դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների պատմագիտական հայացքների և հիմնական գաղափարների, ավանդական և նոր տեսությունների իմացություն,

Ա3. Պատմական սկզբնաղբյուրների, նրանց պարունակած փաստերի վավերականության ստուգման մեթոդների իմացություն,

Ա4. Հայաստանի հարակից երկրների պատմության, հայ-ադրբեջանական, հայ-վրացական հարաբերությունների իմացություն, հարևան երկրների՝ տարածաշրջանային զարգացումներում ու միջազգային քաղաքականության մեջ ունեցած դերի ու նշանակության ընկալում,

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Բ1. Կոնկրետ տեսական գիտելիքները կիրառելով՝ պատմական իրողությունները հասկանալու, փաստերն ու երևույթները համեմատելու, պատմական զարգացման փուլերն ու դրանց օրինաչափությունները համադրելու և համակողմանի գնահատելու, վերլուծելու, դիրքորոշումներ ձևակերպելու կարողություն,

Բ2. Պատմության վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքների համակարգման և տեսական վերլուծության, սեփական դիրքորոշումը փաստարկելու և ինքնուրույն հետևություններ անելու կարողություն,

Բ3. Ուսուցման և դաստիարակության ժամանակակից մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառման կարողություն, մանկավարժական հմտություններ:

Գ. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ

Գ1. Գրավոր և բանավոր խոսքը տրամաբանորեն ճիշտ ձևակերպելու, իր աշխատանքը գիտական հիմունքներով կազմակերպելու կարողություն,

Գ2. Անհրաժեշտ տեսություններ, մեթոդներ և ժամանակակից գործիքակազմ գործնականում կիրառելու կարողություն, այդ թվում՝ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ՝ մասնագիտական ոլորտում խնդիրների վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու կամ խնդիրներին նպաստող հիմնարար գործոնները վերլուծելու և աշխատանքը դյուրացնելու նպատակով,

Դ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Դ1. Ընթացիկ իրադարձություններն ու գործընթացները և անցյալի ու ներկայի փոխհարաբերությունները գնահատելիս քննադատական և ինքնաքննադատական մտածողություն դրսևորելու ունակություններ,

Դ2. Պատմության վերաբերյալ գիտելիքներն ու արդյունքները համադրելու և պատմագիտական գիտելիքի միջազգային չափանիշներին և չափորոշիչներին համապատասխանեցնելու, ինչպես նաև պատմագիտական գիտելիքի միջազգային ձեռքբերումները տեղայնացնելու և տեղական (ազգային) առանձնահատկությունների հետ համադրելու կարողություն,

Դ3. Մասնագիտական ոլորտի խնդիրները բացահայտելիս և լուծումներ առաջադրելիս ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու, ինչպես նաև նոր իրավիճակներին համապատասխան որոշումներ կայացնելու և սովորելու կարողություն:

Դ4. Գիտելիքների և կարողությունների բավարար մակարդակ՝ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում «Պատմություն» մասնագիտությամբ ուսումը շարունակելու համար:

Ե. Ինքնուրույնություն և պատասխանատվություն

Ե1. Պատմաբանի մասնագիտական և էթիկական պատասխանատվության գիտակցելու և հանրային գործընթացների վրա հետազոտական արդյունքների հիման վրա կատարվող որոշումների ազդեցությունը ընկալելու կարողություն:

Ե2. Ազգի և պետության հանդեպ անձնական պատասխանատվություն ստանձնելու, իր գործունեությամբ ազգային և համամարդկային արժեքների տարածմանը նպաստելու կարողություն:

Ե3. Ունակ է իր կրթական պահանջմունքները բացահայտելու և հետագա ուսումնառության վերաբերյալ ինքնուրույն որոշում կայացնելու:

5. **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների.**

§Մերձավոր Արևելքի երկրների պատմություն¦ դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել իր մասնագիտական գործունեության ընթացքում, դպրոցում, արխիվում, թանգարանում աշխատելու, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և պատմության ուսումնասիրման բնագավառում գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

6. **Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը**

Չափանիշ	Առկա ուսուցման համակարգ	Հեռակա ուսուցման համակարգ
Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ)		3 կրեդիտ/90 ժամ

Աշխատանքի տեսակը	ժամաքանակ	ժամաքանակ
Դասախոսություն		8
Գործնական աշխատանք		
Սեմինար պարապմունք		4
Լաբորատոր աշխատանք		
Ինքնուրույն աշխատանք		78
Ընդամենը		90
Ստուգման ձևը՝ ստուգարք		

7. <u>Ուսումնական աշխատանքների տեսակները</u>.

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:
- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:

  Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:

  Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են
  - <u>Ռեֆերատ</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
  - <u>Գործարար խաղեր</u> – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործ-

ընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսում-նասիրման և լուծման նպատակով:

- **Զեկույց** – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
- **Հարցազրույց** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝** հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր:

9. **Ուսումնառության մեթոդներն են** մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում:

10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների

Հ/հ	Թեմա (բաժին)	Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների				
		դասախոսություն	սեմինար պարապմունք	գործնական աշխատանք	լաբորատոր աշխատանք	Ինքնուրույն աշխատանք
1.	Մերձավոր Արևելքի երկրները 19-րդ դարից- մինչև առաջին աշխարհամարտի ավարտը	2				
2.	Անկախության գործընթացը Մերձավոր Արևելքի երկրներում (1918-ից -1940-ական թթ.)	2				
3.	Իսրայելի պետության ստեղծումը	2				
4.	Մերձավոր Արևելքի երկրները 20-րդ դարի վերջին քառորդից մինչև մեր օրերը : Քաղաքական մթնոլորտի բարելավումը Մերձավոր Արևելքում և արաբա-իսրայելական փոխհարաբերություններում 1990-ական թթ.-2000-ականների սկիզբին	2				
5.	Արաբա-իսրայելական հակամարտությունը		2			
6.	Մերձավորարևելյան կոնֆլիկտի քրդական շերտը		2			
ԸՆԴԱՄԵՆԸ 8+4 12ժամ						

11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

հ/հ	Անվանումը/հեղինակ	Հրատարակության տարի
Պարտադիր գրականություն (ՊԳ)		
1.	Ասիայի և Աֆրիկայի երկրների նոր պատմություն (Ացամբայի խմբագրությամբ), Երևան, 1975	
2.	Ասիայի և Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն (Յուրևի խմբագրությամբ), Երևան, 1982:	
3.	Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3	
4.	Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 4	
5.	Հովհաննիսյան Ն., Իրան, այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը	
6.	Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն	
7.	Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն	
Լրացուցիչ գրականություն(ԼԳ)		
1.	Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.7, 12,24, 25, 25,	
2.	Մհոի, Շ., Քրդական աղգային-ազատագրական շարժումները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո,	
3.	Պողոսյան Ս., Քրդերը և հայկական հարցը,	
4.	Պրիմակով Ե., Մի դավադրության պատմություն,	
5.	Գասպարյան Ա., Նոր միտումներ Միացյալ Նահանգների մերձավորարևելյան քաղաքականության մեջ 1978-1979թթ. իրանական հեղափոխությունից հետո:	
6.	Родригес А., История стран Азии и Африки в новейшее время,	
7.	Новейшая история стран Азии и Африки, XX век, часть 2, 1945-2000	

8.	Заяц Д., Из истории арабо-азраильского конфликта, М. 2000.	
9.	Никитина Г., Государство Израиль, М. 1968.	
10.	Примаков Е., Анатомия ближневосточного конфликта, М. 1978.	
11.	Григорян Г., Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1989.	
12.	Холодная война 1945-1963гг., Сборник статей, М., 2003.	
13.	20.Международные конфликты, М., 1972.	
14.	1921. История Курдистана, М.,1999.	
15.	Гасратян Курды Турции в новейшее время, Ереван, 1990.	
Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)		
1.		
2.		

12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

12.1.Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

Թեմա		Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Գրականություն
	Մերձավոր Արևելքի երկրները 19-րդ դարից- մինչև առաջին աշխարհամարտի ավարտը	Ներկայացնել Արաբական երկրները Օսմանյան կայսրության կազմում, արաբական երկրների հասարակական կարգը, արաբական ժողովուրդների պայքարը թուրքական ճնշման դեմ, Սիրիան և Լիբանանը Մուհամմեդ Ալիի իշխանության ներքո, օտարերկրյա կապիտալի ներթափանցումը Սիրիա և Լիբանան, Անգլիայի դիրքերի ամրապնդումը Արաբիայում և Իրաքում, Սիրիայի և Լիբանանի վերածումը կիսագաղութի, ազգային-ազատագրական շարժումը Սիրիայում և Լիբանանում, Իրաքի վերածումը կիսագաղութի ազատագրական շարժումը Իրաքում, Իրաքը առաջին աշխարհամարտի ժամանակ :	2	Ասիայի ¨ Աֆրիկայի երկրների նոր պատմություն (Ացամբայի խմբագրությամբ), Եր¨ան, 1975, Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր ¨ նորագույն պատմություն, Համացանց

2.	Անկախության գործընթացը Մերձավոր Արևելքի երկրներում (1918-ից -1940-ական թթ.)	Ներկայացնել Լիբանանի ազատագրումը օսմանյան տիրապետությունից և օկուպացումը Ֆրանսիայի կողմից (1918-1920թթ.,) ֆրանսիական մանդատի հաստատումը, Մեծ Լիբանան պետության վերածումը Լիբանանի հանրապետության, ֆրանսիական մանդատի վերացումը և Լիբանանի անկախության նվաճումը (1939-1945թթ.,) անգլիական օկուպացիոն վարչակարգի հաստատումը Իրաքում և հակաբրիտանական պայքարի սկիզբը (1918-1920թթ.,) Իրաքի ձևական անկախությունը իրական անկախության վերածելու պայքարի փուլում (1932-1958թթ.,) Բալֆուրի դեկլարացիան և Պաղեստինում հրեական տուն ստեղծելու հարցը, Պաղեստինը բրիտանական ենթամանդատային տարածք, հրեական տան կազմավորման գործընթացը, և արաբա-հրեական հակամարտությունը (1920-1948թթ.,) թուրքական տիրապետության վերացումը և սիրիական թագավորության հռչակումը (1918-1920թթ.,) Սիրիան ֆրանսիական մանդատի կառավարման ներքո (1920-1939թթ.,) ֆրանսիական մանդատի վերացումը և Սիրիայի քաղաքական անկախության նվաճումը (1939-1946թթ.)	2	Ասիայի ¨ Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն (Յուր¨ի խմբագրությամբ), Եր¨ան, 1982, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3,4,Երևան 2006, 2007, Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր ¨ նորագույն պատմություն,Երևան, 2003, Համացանց
3	Իսրայելի պետության ստեղծումը	Ներկայացնել Սիոնիզմի գաղափարախոսության ձ¨ավորումը: «Ազգային տուն» հիմնելու վերաբերյալ Բալֆուրի հրեաներին տված խոստումը: Պաղեստինը Մեծ Բրիտանիայի մանդատի ներքո: Հրեաների ներգաղթը Պաղեստին: Մանդատային իշխանությունների հրեամետ գործելակերպը: Արաբական Բարձրագույն Կոմիտե կազմակերպությունը: Արաբների պայքարը Պաղեստինում: «Սպիտակ թուղթը» խնդրի կարգավորման տարբերակ: Պաղեստինը հրեական ու արաբական մասերի բաժանելու վերաբերյալ ՄԱԿ-ի 1947 թվականի 181/II բանաձևի ընդունումը:	2	Ասիայի ¨ Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն (Յուր¨ի խմբագրությամբ), Եր¨ան, 1982, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3,4,Երևան 2006, 2007, Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր ¨ նորագույն պատմություն,Երևան, 2003, . Համացանց

4.	Մերձավոր Արևելքի երկրները 20-րդ դարի վերջին քառորդից մինչև մեր օրերը Քաղաքական մթնոլորտի բարելավումը Մերձավոր Արևելքում արաբա-իսրայելական փոխհարաբերություններում 1990-ական թթ.-2000-ականների սկիզբին	Ներկայացնել Մերձավոր Արևելքի կոնֆլիկտների կարգավորմանը նվիրված միջազգային կոնֆերանսի հրավիրումը Մադրիդում: 1991 թվականի գաղտնի բանակցությունները ՊԱԿ-ի Իսրայելի միջև Օսլոյում: «Պաղեստինի ժամանակավոր ինքնավարության սկզբունքների վերաբերյալ Հռչակագրի» ստորագրումը: Օսլո 2 համաձայնագիրը որպես պաղեստինյան հակամարտության կարգավորման հերթական քայլ: Խաղաղության գործընթացը արաբական արևելքում (1990-2000թթ.):Պայքարի նոր փուլ Պաղեստինի համար – Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի այցը Երուսաղեմ: Ինթիֆադայի երկրորդ փուլի սկսվելը: Ինթիֆադան ճնշելու Իսրայելի խիստ ու կոշը ռազմական քայլերը: Պաղեստինյան ինքնավարության ենթակառույցները ոչնչացնելու Իսրայելի քաղաքականությունը: «Ճանապարհային քարտեզի» պլանի առաջադրումը: Երուսաղեմի հիմնախնդիրը պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացում:	2	Ասիայի Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն (Յուրի խմբագրությամբ), Երևան, 1982, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3,4,Երևան 2006, 2007, Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր նորագույն պատմություն,Երևան, 2003,

1.1. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

հ/հ	*Թեմա*	Ուսումնասիրվող հարցեր	*Ժամաքանակ*	Ստուգման ձևը	Գրականություն
1.	Արաբա-իսրայելական հակամարտությունը	Ներկայացնել Արաբա-իսրայելական առաջին պատերազմը: Իսրայելի հաղթանակը, նրա կողմից Պաղեստինի արաբների հողերի մի մասի գրավումը: Պաղեստինցի գաղթականների հարկադրական գաղթը հար¨ան արաբական երկրներ: Պաղեստինի ազգային խորհրդի (ՊԱԽ) ¨ Պաղեստինի ազատագրության կազմակերպություն (ՊԱԿ-ի) ստեղծումը: Պաղեստինյան Ազգային խարտիան: ՖԱԹՀ-ի ստեղծումը: Իսրայելի ռազմական հաղթանակը: Պատերազմի հետ¨անքներն ու անմիջական ազդեցություն Պաղեստինի հարցի վրա: Իսրայելական զորքերի կողմից Ղազայի շրջանի, Ար¨ելյան Երուսաղեմի ու Հորդանան գետի ար¨մտյան ափի գրավումը: ՖԱԹՀ-ի նախագահ Յասիր Արաֆաթը ՊԱԿ-ի գործադիր կոմիտեի նախագահ: ՊԱԿ-ի ճանաչումը որպես Պաղեստինի արաբ ժողովրդի միակ օրինական ներկայացուցիչ: Մերձավորար¨ելյան ¨ պաղեստինյան կոնֆլիկտի խաղաղ կարգավորման ուղղությամբ ԱՄՆ-ի ¨ ԽՍՀՄ-ի գործողությունների ակտիվացումը: «Հող՝ խաղաղության դիմացե լոզունգը: Նրա դրական արձագանքը միջազգային հանրության կողմից: «Ֆահդի պլանը: Պաղեստինյան հակամարտության լուծման ամերիկյան ծրագիրը: Ռեյգանի պլանի մերժումը ՊԱԿ-ի ¨ արաբական մյուս երկրների կողմից: «Բրեժն¨ի պլանը: «Ինթիֆադայիե սկիզբը: Պաղեստինի ազգային խորհրդի կողմից Պաղեստինի անկախության մասին հռչակագրի ընդունումը: Մերձավոր Ար¨ելքի կոնֆլիկտների	2	բանավոր	Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3,4,Երևան 2006, 2007, Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր ¨ նորագույն պատմություն,Երևան, 2003,

		կարգավորմանը նվիրված միջազգային կոնֆերանսի հրավիրումը Մադրիդում: 1991 թվականի գաղտնի բանակցությունները ՊԱԿ-ի ¨ Իսրայելի միջ¨ Օսլոյում: «Պաղեստինի ժամանակավոր ինքնավարության սկզբունքների վերաբերյալ Հռչակագրիե ստորագրումը: Օսլո 2 համաձայնագիրը որպես պաղեստինյան հակամարտության կարգավորման հերթական քայլ: Խաղաղության գործընթացը արաբական ար¨ելքում (1990-2000թթ.):Պայքարի նոր փուլ Պաղեստինի համար – Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի այցը Երուսաղեմ: Ինթիֆադայի երկրորդ փուլի սկսվելը: Ինթիֆադան ճնշելու Իսրայելի խիստ ու կոշը ռազմական քայլերը: Պաղեստինյան ինքնավարության ենթակառույցները ոչնչացնելու Իսրայելիքաղաքականությունը: «Ճանապարհային քարտեզիե պլանի առաջադրումը: Երուսաղեմի հիմնախնդիրը պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման գործընթացում:			
2.	Մերձավորար¨ելյան կոնֆլիկտի քրդական շերտը .	Քրդական հարցի առաջացումը, թուրքական իշխանությունների կողմից քրդերի սպիտակ ցեղասպանության քաղաքականությունը, Քրդական ընդհատակյան կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությունը:Ներկայացնել Քրդական աշխատավորական կուսակցության (ՔԱԿ) ստեղծումը, Աբդուլլահ Օջալանը իբր¨ կուսակցության նախագահ: Տալ Քրդերի զինված պայքարը Թուրքիայում 1980-1990-ական թվականներին, քրդական հարցի դրվածքը Թուրքիայում, Իրանում, Իրաքում, Սիրիայում:Անդրադառնալ քրդական հարցի նկատմամբ մեծ տերությունների՝ ԱՄՆ-ի ու ԽՍՀՄ-ի	2	բանավոր	Միոի Շ., Քրդական աղգային-ազատագրական շարժումները երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, Մերձավոր ¨ Միջին Ար¨ելքի երկրներ ¨ ժողովուրդներ, հ.7, 12,24, 25, 25, Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Երևան, 2005, Թուրքիայի հանրապետության պատմություն, Երևան, 2014,

		դիվանագիտական հաշվարկներին, Իրաքում քրդական ինքնավարության ստեղծման պատմությանը:			

1.1. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

h/h	Ինքնուրույն աշխատանքի թեմաները	Ուսումնասիրվող հարցեր	Աշխատանքի տեսակը	Ներկայացման ժամկետները	Ստուգման ձևը	Գրականություն
1.	Նավթային գործոնն արաբական ար¨ելքում	«Արաբներ» և «նավթ» հասկացությունների անքակտելիությունը: Պայքար ազգային հարստությունների համար: Արաբական երկրների կողմից նավթի՝ որպես ճնշման միջոցի օգտագործումը ԱՄՆ ¨ ար¨մտյան այլ երկրների վրա: Նավթը որպես քաղաքական զենք: Նավթը արաբական երկրների տնտեսական, սոցիալական, գիտական, մշակութային զարգացման, նրանց միջ¨ քաղաքական համագործակցության գործոն: Պարսից ծոցի ավազանին ու նավթային աղբյուրներին տիրանալու ամերիկյան միտումները:	գրավոր	Կիսամյակի ընթացքում	բանավոր	Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, հ.3, Եր., 2006 : Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, հ.4, Եր., 2007 : Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր ¨ նորագույն պատմություն, Եր., 2003 : Մերձավոր ¨ Միջին Ար¨ելքի երկրներ ¨ ժողովուրդներ, հ.26, Եր., 2007 :Համացանց

2.	Ջրային հակամարտությունը Մերձավոր Արևելքում	Ջրի պակասը Մերձավոր Արևելքում՝ խոչընդոտ արդյունաբերական զարգացմանը: Տիգրիս - Եփրատյան, Նեղոսի, Հորդանան գետի ջրավազաններն ու Արևմտյան ափի արտեզյան աղբյուրներ: Ջրի պակասը, որպես մշտական ապակայունացնող գործոն:	գրավոր		բանավոր	Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, հ.3, Եր., 2006 : Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, հ.4, Եր., 2007 : Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր ¨ նորագույն պատմություն, Եր., 2003 : Մերձավոր ¨ Միջին Արևելքի երկրներ ¨ ժողովուրդներ, հ.26, Եր., 2007 : Համացանց Համացանց
3.	Իսլամական արմատականությունը, նրա դրսևորումները Մերձավոր Արևելքում	Իսլամական արմատականությունը, նրա դրսևորումները Մերձավոր Արևելքում Արևմտականացման վտանգը իսլամական արմատականության ակտիվացման պատճառ :	գրավոր		բանավոր	Մերձավոր ¨ Միջին Արևելքի երկրներ ¨ ժողովուրդներ, հ.26, Եր., 2007 : Համացանց

2. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում

Ռեսուրսի անվանումը	Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում)
Լսարան (հատուկ կահավորմամբ)	Լսարան
Նյութեր լաբորատոր աշխատանքների համար	
Սարքեր, սարքավորումներ	Գրատախտակ, դիդակտիկ նյութեր, քարտեզներ, համակարգիչ
Համակարգչային ծրագրեր	
Այլ	

3. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի:

3.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

3.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

3.3. Գնահատման չափանիշները.

- Տեսական գիտելիքներ
- Գործնական աշխատանքներ
- Սեմինար պարապմունքներ
- Ինքնուրույն աշխատանք

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Պ/Բ- 044 –ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն՝ 011401.00.6 - Մասնագիտական մանկավարժություն / Պատմություն
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

Կրթական ծրագիր՝ 011401.18.6 – Պատմություն
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

Որակավորման աստիճան՝ բակալավր

Հեռակա ուսուցման համակարգ

Դասընթացի թվանիշը, անվանումը	**Պ/բ-044- Մերձավոր Արևելքի երկրների պատմություն**			
Դասընթացին հատկացվող կրեդիտը	3 կրեդիտ			
Ուսումնառության տարի / կիսամյակ	5-րդ տարի, 10-րդ կիսամյակ			
Ժամերի բաշխումը	Լսարանային	12	Դասախոսություն	8
			Սեմինար	4
			Լաբորատոր աշխատանք	
			Գործնական աշխատանք	
	Ինքնուրույն	78		
	Ընդամենը	90		
Ստուգման ձևը	Ստուգարք			
Դասընթացի նպատակը	«Մերձավոր Արևելքի երկրների պատմությունե *առարկայի ուսուցումը նպատակ ունի.* 1. Ուսանողներին ծանոթացնել Մերձավոր Արևելքի երկրների պատմության կարևորագույն իրադարձություններին: 2. Խորացնել և ընդլայնել ուսանողների ընդհանուր տեսական գիտելիքները Մերձավոր Արևելքի երկրների պատմության վերաբերյալ: 3.Ուսանողներին սովորեցնել պատմահամեմատական մեթոդով կապեր ստեղծել հայոց պատմության և մերձավորարևելյան տարածաշրջանի պետությունների պատմության հետ:			
Դասընթացի վերջնարդյունքները	Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը. ***Գիտելիք*** 1. արդի միջազգային հարաբերություններում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և դրանից բխող հայ ժողովրդի			

	քաղաքական հետաքրքրությունները, ակնկալիքներն ու հեռանկարը 2. գիտելիքներ մերձավորարևելյան տարածաշրջանի հիմնական հիմնախնդիրների, պաղեստինա-իսրայելյան հակամարտությանը, իսլամական արմատականության, քրդական հիմնախնդրի, նավթային ու ջրային հակամարտությունների վերաբերյալ: ***Հմտություն*** 1. պատմական դարակազմիկ իրադարձություններն ու երևույթները մեկնաբանելու, համեմատելու, քննարկելու, դրանց նկատմամբ սեփական կարծիք արտահայտելու ունակություն 2.պատմական հիմնախնդիրը տարբեր տեսանկյուններից դիտարկելու, դրա լուծման հնարավոր եղանակներն ուսումնասիրելու ու լուծումներ գտնելու ունակություն 3.պատմության ուսումնասիրության ընթացում նորագույն մեթոդների, հնարների, տեխնոլոգիաների կիրառման ունակություն 4.Պատմական զարգացումները և աշխարհաքաղաքական իրադրությունը վերլուծելու և ունակություն ***Կարողունակություն*** ▪ մեկնաբանել, համեմատել, քննարկել պատմական դարակազմիկ իրադարձություններն ու երևույթները, դրանց նկատմամբ արտահայտել սեփական կարծիք ▪ արտահայտել, համադրել, վերլուծել պատմական փաստերը և համակողմանի գնահատել երևույթները, ▪ ինքնուրույն նեղրում կատարել մասնագիտական ոլորտում
Դասընթացի բովանդակությունը	<u>Թեմա 1.</u> Մերձավոր Արևելքի երկրները մանդատային համակարգի շրջանում(1920-1940-ական թթ.) <u>Թեմա 2</u>. Իսրայելի պետության ստեղծումը <u>Թեմա 3.</u> Պաղեստինա-իսրայելյան հակամարտության սկիզբը Թեմա 4. Քաղաքացիական պատերազմը Լիբանանում <u>Թեմա 5</u>. Սիրիան Հաֆեզ Ասադի կառավարման շրջանում <u>Թեմա 6</u>. Իրաքը Սադամ Հուսեյնի կառավարման շրջանում <u>Թեմա 7</u>. Արաբական գարունը

	Թեմա 8. Նավթային գործոնն արաբական արևելքում Թեմա 9. Ջրային հակամարտությունը Մերձավոր Արևելքում Թեմա 10. Իսլամական արմատականությունը, նրա դրսևորումները Մերձավոր Արևելքում
Գնահատման մեթոդները և չափանիշները	Գնահատումն իրականացվում է բազմագործոնային համակարգով՝ 100 բալանոց սանդղակով, հետևյալ բաղադրիչների ներառմամբ. ✓ ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճան, ✓ ինքնուրույն աշխատանքի կատարում, ✓ սեմինար պարապմունքներին ուսանողի մասնակցություն, ✓ ուսանողի կողմից դրսևորած ընթացիկ ակտիվություն, հմտություններ և կարողություններ, ✓ 2 ընթացիկ ստուգում թեստային առաջադրանքով
Գրականություն	***Պարտադիր-*** 1.Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, հ.3, Եր., 2006 : 2.Հովհաննիսյան Ն. Արաբական երկրների պատմություն, հ.4, Եր., 2007 : 3.Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Եր., 2003 : 4.Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.26, Եր., 2007 : 5.Ասիայի և Աֆրիկայի երկրների նորագույն պատմություն (Յուրևի խմբագրությամբ), Երևան, 1982: Երևան, 1982: 6.Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն Երևան, 2005: 7. Родригес А., История стран Азии и Африки в новейшее время, Москва, 2008, 8. Новейшая история стран Азии и Африки, XX век, часть 2, 1945-2000, Москва, 2004. 9. Новейшая история стран Азии и Африки, XX век, часть 2, 1945-2000, Москва, 2004. ***Լրացուցիչ-*** 1.Հարությունյան Կ., Պաղեստինյան հիմնախնդրի ջրային ասպեկտը,

	2.Հովհաննիսյան Ն., Իրան, այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004: 3.Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 26, Եր., 2007 : 4. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.7, 12,24, 25, 25, Երևան, 1975, 2003, 2005, 2007, 2009: 5.Պրիմակով Ե., Մի դավադրության պատմություն, Երևան, 1987: 6.Գասպարյան Ա., Նոր միտումներ Միացյալ Նահանգների մերձավորարևելյան քաղաքականության մեջ 1978-1979թթ. իրանական հեղափոխությունից հետո,Երևան, 2002: 7. Заяц Д., Из истории арабо-азраильского конфликта, М. 2000. 8. Никитина Г., Государство Израиль, М. 1968. 9. Примаков Е., Анатомия ближневосточного конфликта, М. 1978. 10. Григорян Г., Позиция Сирии в ближневосточном конфликте, Ереван, 1989. 11. Холодная война 1945-1963гг., Сборник статей, М., 2003. 12.Международные конфликты, М., 1972. 13.Боронов Р., Нефть и политика США на Ближнем Востоке, М. 1977. 14.Валькова Л., Саудовская Аравия, Нефть, ислам, политика, М., 1987. 15.Герасимов О., Иракская нефть, М., 1969.